Առևտրի քանակական սահմանափակում. քվոտա

Քվոտան ներմուծման կամ արտահանման քանակական սահմանափակում է: Այն կարող է լինել բացարձակ կամ խառը: Բացարձակ քվոտայի դեպքում սահմանվում է որոշակի ժամանակի ընթացքում համապատասխան ապրանքի ներմուծման կամ արտահանման առավելագույն թույլատրելի քանակը: Օրինակ՝ ներկայումս ԱՄՆ Չինաստանից կարող է ներմուծվել տարեկան ոչ ավել, քան 80,197,248 քառակուսի մետր տեքստիլ: Խառը քվոտայի դեպքում ապրանքը կարող անսահմանափակ ներմուծվել կամ արտահանվել, սակայն մինչև որոշակի քանակը մաքսատուրքը ցածր է, իսկ սահմանված քանակը գերազանցելուց հետո մաքսատուրքը կտրուկ բարձրանում է: Խառը քվոտաները ներկայումս կիրառվում են գրեթե բացառապես գյուղմթերքների նկատմամբ: Օրինակ՝ կարագի ներմուծման նկատմամբ Կանադայում գործող խառը քվոտայի մաքսատուրքը քվոտայի սահմաններում կազմում է մինչև 15%, իսկ քվոտայի գերազանցումից հետո՝ շուրջ 300%:

ՀՀ-ում քվոտաներ պաշտոնապես չեն կիրառվում, թեպետ գործնականում լայն սպառման ապրանքների ներմուծումը քվոտավորվում է: Զարգացած երկրներում քվոտաներ մինչև վերջերս լայնորեն կիրառվում էին հատկապես տեքստիլի ներմուծման նկատմամբ՝ ներքին արտադրությունը Զարգացող երկրների անհամեմատ արդյունավետ մրցակցությունից պաշտպանելու նպատակով: Դրանք, սակայն, 2005թ–ին դադարեցվեցին՝ համաձայն դեռևս 1995թ–ին Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակում ձեռք բերված պայմանավորվածության: Սակայն, Չինաստանից տեքստիլի ներմուծման նկատմամբ քվոտաների գործողությունը երկարաձգվեց մինչև 2008թ–ը: Տեքստիլի ներմուծման քվոտաները շարունակում են գործել նաև Ռուսաստանի ու Ուկրաինայի նկատմամբ, քանի որ այդ երկրները առայժմ ԱՀԿ անդամ չեն:

Քվոտայի տնտեսական ազդեցությունը դիտարկենք փոքր երկրի համար մասնակի հավասարակշռության օրինակով:

Գրաֆիկ 77-ում ազատ առևտրի դեպքում միջազգային գինը P_X^1 է, ներմուծումը՝ $X^2 - X^1$ է, ներքին արտադրությունը՝ X^1, սպառումը՝ X^2: Ենթադրենք՝ կառավարությունը սահմանում է ներմուծման քվոտա՝ $X^4 - X^3$ մեծությամբ: Արդյունքում ապրանքի գինը ներքին շուկայում կբարձրանա մինչև P_X^2, որի հետևանքով ներքին արտադրությունը կընդլայնվի մինչև X^3, իսկ սպառումը կկրճատվի մինչև X^4:

Գրաֆիկ 77: Ներմուծման քվոտայի ազդեցությունը արտադրության, սպառման, ներմուծման և բարեկեցության վրա



Քվոտայի ազդեցությունը մեկնաբանվում է նույն կերպ, ինչ մաքսատուրքի դեպքում՝ բացառությամբ b տիրույթի: Վերջինս արտահայտում է ներմուծման քվոտայի ռենտան, որի հասցեատերը, կախված՝ ինչ մեթոդով է իրականացվում քվոտայի բաշխումը, կարող են լինել պետբյուջեն, ներմուծողները, արտաքին արտադրողները և այլոք:

Այսպես, եթե ներմուծող կազմակերպություն(ներ)ը շուկայում մենաշնորհային դիրք ունեն և կարող են միջազգային շուկայում գնել P_X^1 գնով և ներքին շուկայում վաճառել P_X^2 գնով, ապա b տիրույթը բաժին կընկնի իրենց: Հակառակ դեպքում, եթե ներքին շուկան մենաշնորհային չէ, ապա ներմուծողները միմյանց հետ մրցելով՝ կբարձրացնեն գնման գինը և b տիրույթը բաժին կընկնի արտաքին արտադրողներին:

b տիրույթի հասցեատերը կարող է լինել պետբյուջեն, եթե վերջինս իրականացնի քվոտաների բաշխման աճուրդային վաճառք: Այդ դեպքում աճուրդով ներմուծման իրավունք գնողները պատրաստ կլինեն վճարել մինչև $P_X^2 - P_X^1$ գումար:

Ի վերջո b տիրույթը կարող է արտահայտել նաև կաշառքի մեծությունը, քանի որ կառավարության կողմից քվոտայի բաշխման դեպքում խոշոր ներմուծողները հակված կլինեն նախապես կաշառել թույլտվություն տվող պաշտոնյաներին՝ b տիրույթի չափով:

1970-ական և 80-ական թվականներին քվոտաների հետ մեկտեղ լայնորեն կիրառվում էին նաև այսպես կոչված «արտահանման կամավոր սահմանափակումներ» (VER): VER-ը ներմուծող և արտահանող երկրների միջև ձեռք բերվող պայմանավորվածություն է՝ արտահանումը «կամավոր» սահմանափակելու վերաբերյալ: Արտահանող երկիրը համաձայնվում է ինքնուրույն կիրառել նման սահմանափակում, քանի որ հակառակ դեպքում, ներմուծող երկիրը սպառնում է կիրառել կանխարգելիչ մաքսատուրքեր կամ քվոտաներ: VER-ի հիմնական տարբերությունը քվոտայից նրանումն է, որ VER-ի դեպքում քվոտայի ռենտան բաժին է ընկնում արտադրողներին և ոչ թե ներմուծող երկրի կառավարությանը կամ ներմուծողներին: VER–ը հատկապես տարածված էր պողպատի և ավտոմեքենաների առևտրում: 1995թ–ից ԱՀԿ շրջանակում երկրները պայմանավորվել են VER չկիրառել: